

Ֆ. Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

(Մենդյան 70-ամյակի առթիվ)

Լրացավ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների և կառավարման ավտոմատացված համակարգերի ճանաչված մասնագետ, ակադեմիկոս Ֆադեյ Տոճատի Սարգսյանի ծննդյան 70-ամյակը:

Սարգսյանը անցել է կյանքի բեղուն և մաքառումներով լի, ուսանելի ճանապարհ: Հիսնամյա գիտական, հասարակական, պետական գործունեության ընթացքում հոբելյարը մշտապես հավատարիմ է մնացել իր որդեգրած ուղուն: Նրան հատուկ է վիթխարի աշխատասիրությունը, գործին ինքնամոռաց նվիրումը, պահանջկոտությունը իր և շրջապատի նկատմամբ, կարգապահությունը, մարդկանց հոգսերը թեթևացնելու պատրաստակամությունը: Տասնյակ տարիներ դաշնվելով գիտակազմակերպական և հասարակական-քաղաքական կյանքի առաջավոր գծում, նա ապրել է հարազատ ժողովրդի, հայրենիքի շահերով: Իր ուժն ու հոանդը նվիրաբերել նրան:



1946 թ. ավարտելով Սանկտ Պետերբուրգի ռազմական ակադեմիան, Սարգսյանը ստանում է ռադիոտեխնիկական ինժեների մասնագիտացում: Հետագա տասնամյակներում նրա աշխատանքային գործունեության հաջողությունների հիմնական գրավականը ինժեներական նորագույն մշակումների կարևորությունն ընկալելու և կիրառելու, մշտապես գիտատեխնիկական առաջավոր դիրքերում քայլելու հատկանիշն է եղել:

Ռազմական ակադեմիան ավարտելուց և ավելի քան մեկ տասնամյակ ռազմական նախարարության համակարգում իր մասնագիտությամբ աշխատելուց հետո 1950-ական թթ. վերջերին Ֆ. Սարգսյանը տեղափոխվում է Երևան: Այստեղ սկսվում է նրա գիտական և գիտակազմակերպական դրսևորությունը բուռն ժամանակաշրջանը: Նրա գիտական աշխատանքները ծավալվեցին Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում (ԵՐՄԻՊՀԻ), ուր աշխատեց շուրջ տասնութ տարի (1959—1977 թթ.): Նկատենք, որ նրա ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ կատարվող աշխատանքները փակ բնույթ ունեին և այդ պատճառով գիտական արդյունքների ճնշող մեծամասնությունը արտացոլված է բազմաթիվ փակ (զաղտնի) գիտական հաշվետվություններում, էսքիզային և տեխնիկական նախագծերում, տեխնիկական փաստաթղթերում, հոդվածներում, սեմինարներում և գիտատեխնիկական խորհուրդներում ունեցած զեկուցումներում: Գիտական այդ արդյունքները ամփոփվեցին 1968 թ. գիտու-

թյան թեկնածուի և 1973 թ. գիտության դոկտորի գիտական աստիճանների հայրման դիսերտացիաներում:

Ֆ. Տ. Սարգսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը ընդգրկում է հետևյալ ուղղությունները. հաշվողական մեքենաների և համակարգերի կառուցվածք և կառուցման սկզբունքներ, մեծ տարածքային ԿԱՀ-ի (կառավարման ավտոմատ համակարգերի) կառուցման սկզբունքներ և նախագծման մեթոդաբանություն, բարդ տեխնիկական համակարգերի հուսալիություն և արդյունավետություն, հաշվողական տեխնիկայի միջոցների լայն սերիական արտադրության կազմակերպման տնտեսական և տեխնիկական խնդիրներ:

ԵրԽՄԳՀ-ի առաջատար մասնագետների հետ միասին Ֆ. Տ. Սարգսյանը հետազոտել և բնութագրել է ինստիտուտի մշակումների երկու հիմնական ուղղություն՝ փոքր էՀՄ-ների (սնտիկի) մեքենաների շարքը) և միջին էՀՄ-ների (միասնական համակարգի միջին, արտադրողականության մեքենաների շարքը) կառուցվածքը և կառուցման սկզբունքները:

Այդ կառուցվածքների հիմքում ընկած են գիտության և տեխնիկայի բարդ բնագավառներից մեկի նվաճումները: Կոնստրուկտորատեխնոլոգիական և էլեմենտային բազա, մեքենայի ներքին կառուցվածքը և լեզուն, էՀՄ-ների օգտագործողների շփման առտաքին լեզուն, ընդհանուր և կիրառական ծրագրային ապահովում, տեխնիկական և շահագործման բնութագրեր, տրնտեսական արդյունավետություն՝ ահա խնդիրների ոչ լրիվ ցանկը, որոնք իրենց արտացոլումն են գտել Ֆ. Տ. Սարգսյանի գիտական աշխատություններում և ինստիտուտում ստեղծված էՀՄ-ների ու ԿԱՀ-երի մոդելներում:

1968—1977 թթ. Ֆ. Տ. Սարգսյանը, որպես գիտական ղեկավար և գրլխավոր կոնստրուկտոր գլխավորում էր մեծ տարածքային հատուկ նպատակի ԿԱՀ-ի ստեղծումը: Դա սկզբունքային նշանակություն ունեցող երկրի պաշտպանության և ԽՍՀՄ Զինված ուժերի կառավարման արդյունավետության բարձրացման համար: Դժվար է գերազանահատել Ֆ. Տ. Սարգսյանի դերը այդ նոր ուղղության ձևավորման գործում: Դրված խնդիրները աչքի էին ընկնում պորբլեմների բտգառիկ բարդությամբ: Նրանց լուծումը անհրաժեշտ էր համակարգի արդյունավետության, հուսալիության, ինֆորմացիայի մըշակման, պահպանման և փոխանցման ճշտության, ամբողջ համակարգի տեխնիկական և շահագործման բնութագրերի ու բազմաթիվ այլ հարցերի պահանջներն ապահովելու համար: Բոլոր այդ պահանջները համապատասխանում, իսկ որոշ դեպքերում անգամ գերազանցում էին առաջատար կապիտալիստական երկրների այդ բնագավառի նվաճումներն:

Վերոնշված խնդիրների իրագործման ընթացքում օգտագործվեց գիտական հետազոտությունների ժամանակակից մեթոդների մի ամբողջ համալիր՝ վերլուծական և վիճակագրական մոդելավորման, կանխագուշակման, փորձաքննական գնահատականների, ռուղեղային հարձակման և այլ մեթոդներ:

Կատարված գիտական հետազոտությունների արդյունքում մշակվեցին հատուկ նպատակի ԱԿՀ-երի, կառավարման օբյեկտների ավտոմատացման միջոցներն համալիրների և ամբողջ համակարգի կառուցման սկզբունքները: Առաջարկվեցին նոր մոտեցումներ ծրագրային ապահովման բարդ համալիրների ստեղծման վերաբերյալ, մշակվեց համակարգի աշխատանքի ալգորիթմներ, նախագծման և համակարգի հետ օպերատորների փոխազդեցության մեթոդաբանությունը, բարդ համակարգերի շահագործման և տեխնիկական բնութագրերի արդյունավետության և հուսալիության գնահատման մեթոդները և այլն:

Ստացված գիտական արդյունքներն ճշտությունը և հիմնավորվածությունը հաստատվեցին վերահիշյալ ԿԱՀ-ի բազմափուլային փորձարկումների և բազմամյա շահագործման արդյունքներում:

Ֆ. Տ. Սարգսյանի գիտական և պրակտիկ գործունեության կենտրոնում է եղել հաշվողական տեխնիկայի կարևորագույն բնութագրերից մեկը՝ հու-

սայիտի վրան ապահովման, պրոբլեմներ, նրա դիտական աշխատություններում լուծված են այդ բազմակողմանի պրոբլեմի հետ առնչվող մի շարք խնդիրներ, որոնք են՝ ջերմային ռեժիմների հաշվարկումը և ջերմության հեռացումը, բլոկերի և հենակների լավագույն կառուցվածքների ընտրությունը:

Հատուկ կարևորություն ունեն Ֆ. Տ. Սարգսյանի ղեկավարությամբ ներկայումս կատարված աշխատանքների գործնական արդյունքները: Երկրորդ հիմնական խնդիրը հաջողություններից էր «Նաիրի» մեքենայի ստեղծումը, որը, օժտված լինելով յուրահատուկ կառուցվածքով, փոքր չափերով և պահանջ-վող հզորությամբ, լայն ճանաչում գտավ և օգտագործվեց հաշվողական կենտրոններում և ձեռնարկություններում ճարտարագիտական հաշվարկումների նպատակով: Վաթսուհական թվականներին արտադրվեցին մի քանի հազար այդպիսի մեքենաներ: Գիտատեխնիկական նորույթի և բարձր տեխնիկատնտեսական ցուցանիշների համար «Նաիրի» էՀՄ-ի հեղինակներին, այդ թվում Ֆ. Տ. Սարգսյանին, շնորհվեց ԽՍՀՄ պետական մրցանակ:

«Նաիրիին» այդ ընտանիքում հաջորդեց «Նաիրի 3—1» էՀՄ-ն՝ ինտեգրալ միկրոսխեմաներով, ԽՍՀՄ-ում առաջին մեքենան, Հետագայում «Նաիրի 3—1» էՀՄ-ի հիման վրա ստեղծվեցին «Նաիրի 3—2» և «Նաիրի 3—3» հաշվողական համայնություններ, որոնք իրենց կիրառումը գտան արտադրության ավտոմատացման և խոշոր ձեռնարկությունների կառավարման գործում: «Նաիրի 3,3»-ի մշակման և մի շարք ձեռնարկությունների կառավարման ավտոմատացված համակարգերում մեքենայի ներդրման համար հեղինակային կոլեկտիվին, այդ թվում և Ֆ. Տ. Սարգսյանին շնորհվեց Ուկրաինական ԽՍՀ պետական մրցանակ:

Հաշվողական տեխնիկայի ձևավորման, ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության և պաշտպանության բոլոր ոլորտներում նրա ներդրման համար սկզբունքային նշանակություն ունեցավ 70-ական թվականների սկզբին տնտեսական փոխօւլնության խորհրդի երկրների հետ համատեղ ընդունված որոշումը՝ IBM ֆիրմայի, 360 շարքի քաջ հայտնի էՀՄ-ներին համապատասխանող էՀՄ-ների ընտանիքի ստեղծման մասին: Ինստիտուտին հանձնարարված էր այդ ընտանիքի միջին արտադրողականության մոդելի՝ ՄՀ—1030-ի մշտելումը, իսկ հետագայում նաև EC—1045, EC—1046 և ուրիշների: Ինստիտուտը հաջողությամբ իրականացրեց իր առջև դրված խնդիրը: Կազանի էՀՄ-ների և Իրենանի «Էլեկտրոն» գործարաններում սերիական արտադրության մեջ ներդրվեցին նշված էՀՄ-ների մոդելները, որոնք իրենց բնութագրերով յիովին բավարարում էին առաջադրված պահանջները:

Շնորհիվ գերազանց բնութագրերի, EC էՀՄ-ների այդ մոդելները ամենալայն տարածումը գտան, նրանց արտադրությունը կազմում էր ԽՍՀՄ-ում թողարկվող ընդհանուր օգտագործման էՀՄ-ների 40 տոկոսը և հատուկ նրպատակի էՀՄ-ների 50 տոկոսը: էՀՄ-ները լայն սպառում էին գտել ՏՓՄ-ի անդամ և մի շարք կապիտալիստական երկրներում:

Վերը նշված մեծ տարածքային հատուկ նպատակի բարդ ԿԱՀ-ի ստեղծումը ինստիտուտի աշխատակիցներից վիթխարի ջանքեր պահանջեց: Արդյունքները գերազանցեցին բոլոր սպասումները: Բազմակողմանի փորձարկումներից հետո համակարգը համաշխարհային ստանդարտներին համապատասխանող իր տեխնիկական և շահագործման բնութագրերով հանձնվեց մշտական շահագործման: Խոշոր այդ նվաճումների համար ինստիտուտը պարգևատրվեց Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, մի խումբ հեղինակներին, այդ թվում Ֆ. Տ. Սարգսյանին, շնորհվեց ԽՍՀՄ պետական մրցանակ:

Նշանակալի են Ֆ. Տ. Սարգսյանի ծառայությունները գիտական կադրերի պատրաստման գործում: Ասպիրանտների և դիսերտանտների համար ինստիտուտում ստեղծվել էին ամենաբարենպաստ պայմանները, որի շնորհիվ ինստիտուտում մշակվեցին և պաշտպանվեցին ավելի քան 100 թեկնածուական դիսերտացիաներ: Ֆ. Տ. Սարգսյանի ղեկավարությամբ նախապատրաստվե-

ցին և պաշտպանվեցին ավելի քան 15 թեկնածուական, իսկ նրա՝ որպես գիտական խորհրդատուի մասնակցությամբ՝ մոտ 10 դոկտորական դիսերտացիաներ:

Ֆ. Սարգսյանին 1977-ին վստահվեց շատ կարևոր և խիստ պատասխանատու աշխատանք: Նա նշանակվեց Խորհրդային Հայաստանի Մինիստրների խորհրդի նախագահ: Շուրջ տասներկու տարի Հայաստանի կառավարության նախագահի պաշտոնում Ֆ. Սարգսյանն իրեն հատուկ եռանդով ու ջանասիրությամբ վիթխարի աշխատանք կատարեց հանրապետության արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, առհասարակ տնտեսության բոլոր բնագավառներում: Նա հատուկ հոգատարությամբ էր վերաբերվում գիտության ու մշակույթի խնդիրներին:

Ֆառեց Սարգսյանը 1990-ին ընտրվեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի մեխանիկայի, ինֆորմատիկայի և տեխնիկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար: Թվում էր, թե բաժանմունքի գործունեությունը ընթանալու է ավանդական գիտական-ակադեմիական հունով: Սակայն գիտության նվաճումները արտադրության մեջ ներդնելու, այն ժողովրդի շահերին ուղղակի ծառայեցնելու գիտագործնական աշխատանքների մեծ փորձ ունեցող Ֆ. Սարգսյանի համար աշխատանքների այդ ուղին անբավարար էր: Նրա ղեկավարությամբ բաժանմունքը սկսեց զբաղվել հանրապետության ժողովրդական տնտեսության համար կենսական նշանակություն ունեցող վառելիքաէներգետիկ ռեսուրսների և համանման պրոբլեմների մշակմամբ:

Հայաստանի գիտությունների ակադեմիան վերջերս ծանր տարիներ է ապրում: Քաղաքական արմատական հեղաշրջումներից, ԽՍՀՄ փլուզումից և Հայաստանի անկախության հռչակումից հետո ակնբախ դարձավ, որ Ակադեմիան կարիք ունի բարեփոխման: Սակայն այն հարցը, թե ինչպե՞ս վերակառուցել գիտության կարևոր այդ կենտրոնը, առաջ է բերում տարակարծություններ: Հնչում են արտասահմանյան որոշ երկրների մոդելները մեզ մոտ մեխանիկորեն կիրառելու գործը ձայներ: Ազգային ավանդներն ու պայմաններն անտեսող այդ կարծիքները կենսագործելը կործանարար հետևանքներ կարող է ունենալ: Ստեղծված անորոշ ու տագնապալի իրավիճակը կվերանա միայն այն ժամանակ, եթե հետևողականորեն իրականացվի հանրապետության նախագահի 1993 թ. մարտի 9-ի հրամանագիրը, որը նախատեսում է լայն հնարավորություններ մեր ակադեմիայի զարգացման համար:

1993 թ. ապրիլին Ֆ. Սարգսյանը ընտրվեց Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պրեզիդենտ: Ակադեմիայի առաջ ծառացած են գիտական պոտենցիալը պահպանելու, արդի պահանջների ոգով աշխատանքները կազմակերպելու, գիտության նվաճումները ժողովրդի շահերին արդյունավետ ծառայեցնելու բազում բարդ պրոբլեմներ: Նորընտիր պրեզիդենտը առկա ղեկավարություններն ըստ ամենայնի պատկերացնելով, ստանձնեց այդ պատվալոր ու պատասխանատու պաշտոնը: ՀՀ ԳԱԱ գիտական կոլեկտիվները լիահույս են, որ նա պատվով կկատարի իրեն վերապահված մեծ աշխատանքը:

ՀՀ ԳԱԱ Ավտոմատ կառավարման համակարգերի գիտաճեռագողական ինստիտուտի տնօրեն,
ակադեմիկոս Ռ. Վ. ԱՔՈՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս ֆաբրիկաբ, քղթակից անդամ
Վ. Բ. ԲԱՐՆՈՒԴԱՐՅԱՆ